Հրատարակութիւն
Հայ Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի

100 քայլ

100 STEPS

Պըրպէնք
2016

100 ՔԱՅԼ

100 STEPS

Հրատարակութիւն

Հայ Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի

Պըրպէնք

2016

Այս գրքոյկը կը հրատարակուի

Ազնիւ մեկենասութեամբ՝

ԴՈԿՏ. ՍՐԿ. ՎԱՐՈՒԺԱՆ եւ ՏԻԿԻՆ ԼԵՆԱ ԱԼԹԸՊԱՐՄԱՔԵԱՆԻ

«*Որդեակ իմ, քու հօրդ պատուիրանը պահէ՛, եւ քու մօրդ օրէնքը մի՛ մերժեր*»:

(Առակ 6:20)

This Publication was made possible through the generous donation of

Dr. Dcn. Varoujan & Mrs. Lena Altebarmakian

"My son, keep your father's command,
And do not forsake the law of your mother".

(Proverb 6:20)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու Խօսք 5

Հին Կտակարան – մինչեւ Քրիստոս 6

Նոր Կտակարան
Աստուածորդին՝ Յիսուս Քրիստոս 7

Մարդ եւ Կրօն 12

Քրիստոնէութիւն եւ Հայ Եկեղեցի 14

Սրբական Դէմքեր 17

Նուիրապետութիւն 18

Եկեղեցական Զգեստներ 19

Եկեղեցական Սպասներ 20

Եկեղեցւոյ Խորհուրդներ 20

Եկեղեցական Տօներ 21

Մեղք եւ Շնորհք 22

Ծէսեր 23

Վարդապետական 25

CONTENTS

Old Testament - Before Christ	28
New Testament - Jesus, the Son of God	29
Man and Religion	34
Christianity and the Armenian Church	36
National Saints	39
Hierarchy	40
Church Vestments	41
Church Services	41
Sacraments	42
Church Feast	42
Sin and Grace	44
Rites	45
Doctrine	48

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«Երեխան կրթէ՛ ճիշտ ճանապարհի համաձայն, նոյնիսկ երբ ան ծերանայ՝ չի՛ շեղիր անկէ»

(Առակներու Գիրք ԻԲ. 6)

Ահաւասիկ երկլեկու կարեւոր հրատարակութիւն մը, որ սիրով կը տրամադրուի մեր բոլոր հաւատացեալ ընտանիքներուն։ Հրատարակութիւն մը, որ ծրագրուած եւ պատրաստուած է յատկապէս փոքրերու եւ պատանիներու համար, որպէսզի անոնք, պատանի տարիքին, սկսին ծանօթանալ Քրիստոնէական Կրօնքի պատմութեան որոշ էջերուն, Աստուծոյ Պատուիրաններուն կամ Օրէնքներուն, Հայ Եկեղեցւոյ դաւանանքին, Եկեղեցւոյ եւ անոր ծիսական վանական օգտակար նիւթերուն, կրօնական սկզբունքներուն եւ արժէքներուն։

Այս հրատարակութեան օգնութեամբ, ծնողները մեծ դիւրութեամբ կրնան իրենց սիրասուն վաւակները կրթել եւ առաջնորդել մարդկային եւ քրիստոնէական ապահով ճանապարհի վրայ, որպէսզի անոնք աճին սրբական գիտելիքներով եւ քրիստոնէական սկզբունքներով։

Գիտութիւնը բարիք է սերունդներու, իսկ Քրիստոնէական Հաւատքը՝ կեանքը ապրելու աստուածապարգեւ խարիսխ։

«*Պիտի սորվեցնեմ քեզի, ցոյց պիտի տամ ճամբան, պիտի խրատեմ քեզ եւ պիտի հսկեմ քու վրադ*» կ'ըսէ Տէրը (Սաղմոս ԼԱ. [ԼԲ.], 8)։

Այս հաւատքով պատրաստուած է այս գիրքը, որ անգամ մը եւս բարեփոխուած կը վերահրատարակենք՝ ձեր հաւատքով դաստիարակելու համար ձեր վաւակները։

Օրհնութեամբ՝

Տ. Յովնան Արք. Տէրտէրեան

Առաջնորդ

Յուլիս 5, 2016

100 ՔԱՅԼ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ – ՄԻՆՉԵՒ ՔՐԻՍՏՈՍ

1. Ո՞վ ստեղծեց աշխարհը։
   Աստուած ստեղծեց աշխարհը։

2. Ո՞վ էր առաջին մարդը։
   Ադամն էր առաջին մարդը, եւ Եւան՝ առաջին կինը։

3. Ջրհեղեղն ինչո՞ւ եղաւ։
   Ջրհեղեղն եղաւ, որովհետեւ երկրի բնակիչները սկսել էին անհնազանդ գտնուել Աստուծոյ պատուիրաններին։

4. Ո՞վ ազատուեց ջրհեղեղից։
   Մի բարի ու աստուածավախ մարդ՝ Նոյ անունով, իր ընտանիքի անդամների հետ։

5. Նոյի տապանը (նաւ) որտե՞ղ կանգ առաւ։
   Նոյի տապանը կանգ առաւ Արարատ լերան վրայ։

6. Ո՞վ էր Աբրահամը եւ Աստուած նրան ի՞նչ երկիր տուեց։
   Աբրահամը մի բարի մարդ էր, կնոջ անունն էր՝ Սառա։ Աստուած նրան Քանանի երկիրը տուեց։

7. Ո՞վ էր Մովսէսը եւ ի՞նչ էր նա արել։
   Մովսէսը Աստուածավախ մարդ էր, ով հնազանդուեց Աստուծու հրամանին եւ հրեայ ժողովրդին Եգիպտոսից դուրս հանեց ու անցնելով Կարմիր ծովով՝ հաստատուեց Քանանի

երկրում։ Մովսէսը նաեւ հրեաներին փոխան–ցեց Աստուծոյ 10 պատուիրանները։

8. Որո՞նք են Տասնաբանեայ պատուիրանները։

Տասնաբանեայ պատուիրանները հետեւեալն են.

1. *Ես եմ քո Տէր Աստուածը. ինձանից բացի ուրիշ Աստուած պիտի չունենաս։*
2. *Կուռք պիտի չպաշտես։*
3. *Աստծու անունը կուր տեղը պիտի չյիշես։*
4. *Շաբաթ օրը պիտի սուրբ պահես։*
5. *Պատուի՛ր հօրդ ու մօրդ։*
6. *Մի՛ սպաննիր։*
7. *Մի՛ շնացիր (անբարոյ կեանքով մի՛ ապրիր)։*
8. *Մի՛ գողացիր։*
9. *Սուտ վկայութիւն մի՛ տուր։*
10. *Մի՛ ցանկացիր ընկերոջդ ունեցվածքին։*

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ԱՍՏՈՒԱԾՈՐԴԻՆ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

9. Ո՞վ էր Մարիամը։

Մարիամը բարի ու գեղեցիկ մի աղջիկ էր, որ նշանուած էր իր նման մի բարի մարդու՝ Յովսէփի հետ։

10. Ի՞նչ խոստացաւ Աստուծոյ հրեշտակը Մարիամին։

Որ նա որդի պիտի ունենայ, ասելով,– Ուրա–խացի՛ր, Մարիամ, մի վաւակ պիտի ունենաս եւ անունը պիտի դնես Յիսուս։ Նա Աստու–ծոյ Որդին պիտի լինի եւ ամբողջ աշխարհը մեղքերից պիտի փրկի։

11. Որտե՞ղ ծնուեց Յիսուս։

Բեթղեհէմում, մի քարայրի մէջ, ուր հովիւները ոչխար էին պահում, քանի որ իջեւանում տեղ չկար։ Մարիամ Աստուածածինը մանուկ Յիսուսին խանձարուրով փաթաթեց եւ մսուրի մէջ դրեց, որովհետեւ օրորոց չկար։

12. Այդ ժամանակ հրեշտակները ի՞նչ էին երգում։

Հրեշտակները երգում էին՝ «Փառք Աստծուն՝ բարձունքներում, խաղաղութիւն երկրի վրայ եւ հաճութիւն մարդկանց մէջ»։

13. Յիսուս ինչո՞ւ աշխարհ եկաւ։

Ճշմարտութեան համար վկայելու (Յովհ 18։37) եւ մարդկանց փրկելու մեղքից ու քարոզելու մի նոր կրօն՝ ճշմարիտ Աստուծոյ կրօնը, մարդասէր եւ խաղաղասէր լինելու կրօնը։

14. Ինչո՞վ էր զբաղւում Յիսուս մինչեւ մկրտուելը։

Իր երկրաւոր ծնողներին օգնելով, Աւետարանն ասում է. «Յիսուս զարգանում էր իմաստութեամբ, հասակով ու շնորհով՝ Աստուծոյ եւ մարդկանց առջեւ» (Ղուկ 2։52)։

15. Յիսուս քանի՞ տարեկան էր երբ մկրտուեց։

Յիսուս մկրտուեց երեսուն տարեկան հասակում, Յովհաննէս Մկրտիչի կողմից՝ Յորդանան գետում։

16. Յիսուս օգնականներ ունէ՞ր։

Այո՛։ Յիսուսի օգնականները իր աշակերտներն էին։ Նրանք հետագայում կոչուեցին Առաքեալներ։ Նրանք տասներկու հոգի էին։

17. Ի՞նչ էին նրանց անունները։

Պետրոս, Անդրիաս, Յակոբոս, Յովհաննէս, Փիլիպպոս, Բարթողիմէոս, Թադէոս, Մատթէոս,

Թովմաս, Յակոբոս Ալփեան, Շմաւոն եւ Յուդա (մատնիչ):

18. Որտե՞ղ էր քարոզում Յիսուս:

Յիսուս շրջում էր իր աշակերտների հետ Հրէաստանի գիւղերում ու քաղաքներում եւ քարոզում էր ժողովարաններում ու տներում, ծովի եզերքին ու լեռների վրայ:

19. Յիսուս ինչպէ՞ս ցոյց տուեց իր՝ Աստուծոյ Որդի լինելը:

Իր աստուածային ուսուցումներով, քարոզներով, բազմաթիւ հրաշքներով, եւ ամենակարեւորը՝ Հայր Աստուծոյ վկայութեամբ:

20. Թուարկէ՛ք Յիսուսի կատարած հրաշքներից մի քանիսը:

- *Յիսուս քայլեց լիճի վրայով (Մատթ 14: 22–33)*
- *Հացի բազմացումը (Մատթ 14:15–21, Մարկ 6:35–44, Ղուկ 9:12–17, Յովհ 6:5–13)*
- *Լուսնոտ մանկան բժշկութիւնը (Մատթ 17: 14–17, Մարկ 9:13–26, Ղուկ 9:37–44)*
- *Երկու կոյրերի բժշկութիւնը (Մատթ 9: 27–31)*

21. Թուարկէ՛ք Յիսուսի առակներից մի քանիսը:

- *Մանանեխի հատիկը (Մատթ 13:31–32)*
- *Կորած ոչխարը (Ղուկ 15:1–7)*
- *Բարի սամարացին (Ղուկ 11:30–36)*
- *Անառակ որդին (Ղուկ 15:11–31)*
- *Անպտուղ թզենին (Ղուկ 13:6–9)*

22. Յիսուս ի՞նչ աղօթք սորվեցուց:

Յիսուս իր աշակերտներին սովորեցրեց «Տէրունական» աղօթքը, որն այսպէս է.

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո՝ որպէս յերկինս եւ յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն, զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք, յաւիտեանս։ Ամէն։

23. Ինչպէ՞ս դիմաւորեց Երուսաղէմի ժողովուրդը, Զատիկը տօնելու եկած, Յիսուսին։

Մեծ ոգեւորութեամբ ձիթենու ու արմաւենու ճիւղեր բռնած եւ հետեւեալ խօսքերով. «Ովսաննա, Դաւթի Որդուն. օրհնեալ է նա, որ Աստուծու անունով է գալիս. խաղաղութիւն երկնքում եւ փառք բարձունքներում»։

24. Ինչպէ՞ս է կոչւում Յիսուսի՝ Երուսաղէմ մուտքի օրը։

Յիսուսի Երուսաղէմ մտնելու օրը կոչւում է «Ծաղկազարդ»։

25. Զատկի ընթրիքի ժամանակ Յիսուս ի՞նչ արեց։

Ընթրիքի ընթացքում Յիսուս գոգնոց կապեց, ջուր, վերցրեց ու որպէս խոնարհութեան նշան՝ լուաց իր աշակերտների ոտքերը, որը հետագայում կոչուեց «Ոտնլուայ»։

26. Յիսուս, հացն ու գինին վերցնելով ի՞նչ ասաց եւ ի՞նչ արեց։

Յիսուս վերցրեց հացը, օրհնեց, գոհութիւն տուեց Աստուծուն եւ աշակերտներին տալով՝ ասաց. «Առէ՛ք, կերէ՛ք, այս իմ մարմինն է. ով ուտի՝ պիտի փրկուի մեղքերից։ Ապա գինու բաժակը վերցնելով՝ օրհնեց, գոհութիւն տուաւ Աստուծուն եւ աշակերտներին

տալով՝ ասաց. Առէ՛ք, խմէ՛ք. այս իմ արիւնն է, որ պիտի թափի բոլոր մարդկանց մեղքերի համար»:

27. Դրանով ի՞նչ հաստատեց Յիսուս:

Դրանով Յիսուս հաստատեց Սուրբ Հաղորդութեան խորհուրդը, որ նրանից յետոյ շարունակաբար կատարւում է եկեղեցում՝ հոգեւորականների կողմից:

28. Յիսուս դատապարտուե՞ց մահուան:

Այո՛, նոյն ժամանակի կրօնական եւ քաղաքական իշխանութիւնները Յիսուսին Գողգոթա տանելով՝ նրան խաչի վրայ գամեցին: Երբ Յիսուս մահացաւ, նրա հետեւորդներից ոմանք մարմինը իջեցրին խաչից եւ կտաւով պատելուց յետոյ՝ դրին գերեզմանի մէջ:

29. Յիսուսին ինչո՞ւ խաչեցին:

Յիսուսին խաչեցին, որովհետեւ նա իր վրայ վերցրեց մարդկային մեղքերը եւ մահացաւ խաչի վրայ մեկ համար: «Ահա Գառն Աստուծոյ, որ վերցնում է աշխարհին մեղքը» (Յովհ 1: 29):

30. Յիսուսի թաղումից երեք օր յետոյ ի՞նչ կատարուեց:

Թաղումից երեք օր յետոյ կատարուեց Յարութեան մեծ հրաշքը: Յիսուս աստուածային զօրութեամբ մեռելներից յարութիւն առաւ: Այդ օրը կոչում ենք Սուրբ Զատիկ: Յարութիւնից յետոյ Յիսուս երեւաց իր աշակերտներին եւ բազմաթիւ հաւատացեալներին:

31. Սուրբ Զատիկից քառասուն օր յետոյ ի՞նչ ենք տօնում:

Սուրբ Զատիկից քառասուն օր յետոյ տօնում ենք Յիսուսի Համբարձումը: Այդ օրը

Յիսուս երկինք բարձրացաւ ու նստեց Հօր աջ կողմում։

32. Համբարձումից տասը օր յետոյ ի՞նչ կատարուեց։

Համբարձումից տասը օր յետոյ վերնատան մէջ Սուրբ Հոգին իջաւ աշակերտների վրայ, եւ նրանք ստացան աստուածային իմաստութիւն եւ շնորհք ու սկսեցին իրար հետ տարբեր լեզուներով խօսել։ Սուրբ Հոգու իջնելը կոչուեց Հոգեգալուստ, որ եղաւ Քրիստոնէական եկեղեցու հաստատման օրը, իսկ վերնատունը դարձաւ աշխարհի առաջին եկեղեցին «Աշխարհամատուռ»ը։

ՄԱՐԴ ԵՒ ԿՐՕՆ

33. Ի՞նչ է կրօնը։

Մարդու եւ Աստուծոյ միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնը կոչւում է կրօն, այս բառը ծագել է «կրել» բառից։

34. Ի՞նչ էին պաշտում մարդիկ հնագոյն ժամանակներում։

Հնագոյն ժամանակներում մարդիկ պաշտում էին բնութեան տարրերը՝ արեւը, կրակը, ջուրը, գետեր ու լճեր, անտառ, կենդանիներ եւ մարդանման չաստուածներ ու պատրաստում էին նրանց արձանները կամ պատկերները, որոնք կոչւում էին կուռքեր։

35. Կռապաշտութիւն բառը ի՞նչ է նշանակում։

Կռապաշտութիւն բառը նշանակում է կուռքերի, չաստուածների պաշտամունք, այսինքն՝ կեղծ կրօն։

36. Ի՞նչ է Մովսիսականութիւնը։

Մովսիսականութիւնը հրեաների կրօնն է։

37. Ի՞նչ է Քրիստոնէութիւնը։

Քրիստոնէութիւնը Քրիստոսի քարոզած կրօնն է։ Համաձայն քրիստոնէական կրօնի, աշխարհի բոլոր մարդիկ՝ Ադամական մեղքի պատճառով հեռացած են Աստծուց եւ Աստուծոյ Միածին Որդուն հաւատալով եւ ընդունելով միայն կարող են հաշտուել Նրա հետ։ Քրիստոս հստակ ասում է. «Ես եմ ճանապարհը, ճշմարտութիւնն ու կեանքը, ոչ ոք չի գայ Հօր մօտ, եթէ ոչ ինձանով» (Յովհ 14։ 6)։

38. Ի՞նչ է սովորեցնում քրիստոնէական կրօնը։

Քրիստոնէական կրօնը սովորեցնում է մարդկանց Աստուածպաշտութեան եւ բարոյական ամենաբարձր պատուիրաններ, որոնք գրուած են Սուրբ Գրքում։ Այդ պատուիրաններից մէկն է «Ոսկէ օրէնքը», «Այն ամէնը ինչ կը կամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպէս եւ դուք արէք նրանց» (Մատթ 7։12)։

39. Ի՞նչ մասերից է բաղկացած Սուրբ Գիրքը։

Սուրբ Գիրքը բաղկացած է երկու մասից. Հին Ուխտ եւ Նոր Ուխտ (կամ Հին Կտակարան եւ Նոր Կտակարան)։

- *Հին Ուխտը ներկայացնում է հրեայ ժողովրդի կեանքը, նկարագրում մարգարէների գործերն ու պատգամները։*
- *Նոր Ուխտը՝ Քրիստոսի կեանքի պատմութիւնն է, Նրա քարոզած կրօնական սկզբունքներն ու բարոյական պատուիրանները, Առաքեալների գործերն ու խրատները։*

40. Ի՞նչ մասերից է բաղկացած Նոր Ուխտը։

Նոր Ուխտը բաղկացած է հետեւեալ մասերից. Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի, Յովհաննէսի Աւետարանները, Գործք Առաքելոցը, Առաքելական նամակները եւ Յայտնութեան գիրքը։ Աւետարանիչները միայն երկուսն են եղել Յիսուսի աշակերտները՝ Մատթէոսը եւ Յովհաննէսը։

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

41. Յիսուսի տասներկու առաքեալներից ովքե՞ր քարոզեցին Հայաստանում։

Յիսուսի տասներկու առաքեալներից Թադէոս եւ Բարթողիմէոս առաքեալները Հայաստան եկան եւ քարոզեցին քրիստոնէութիւնը։

42. Ովքե՞ր էին Հայոց առաջին քրիստոնեաները։

Նորադարձ քրիստոնեաների մէջ էր Հայոց թագաւորի դուստրը՝ Սուրբ Սանդուխտ կոյսը։

43. Սուրբ Թադէոս եւ Բարթողիմէոս առաքեալները ի՞նչ հիմնեցին։

Սուրբ Թադէոս եւ Բարթողիմէոս առաքեալները դարձան Հայոց առաջին լուսաւորիչները եւ հիմնեցին Հայաստանի Եկեղեցին։

44. Ինչպէ՞ս է կոչւում Հայոց Եկեղեցին։

Քանի որ առաքեալները հիմնեցին Հայոց Եկեղեցին, այն կոչւում է Հայ Առաքելական Եկեղեցի կամ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի։

45. Քրիստոնէութիւնը ե՞րբ պետական կրօն հռչակուեց Հայաստանում։

301 թուականին, Տրդատ թագաւորի օրոք, Հայոց լուսաւորիչ Սուրբ Գրիգոր հայրապետի ջանքերով, հայ ժողովուրդն ընդունեց քրիստոնէական կրօնը, որ դարձաւ Հայաստանի պետութեան կրօնը, իսկ Սբ. Գրիգորը՝ Հայոց առաջին հայրապետը կամ՝ կաթողիկոսը։

46. Ո՞ր քրիստոնէական տաճարն առաջինը կառուցուեց աշխարհում եւ կանգուն է մինչեւ այսօր։

Աշխարհում առաջին քրիստոնէական տաճարը կառուցուեց 303 թուականին եւ կոչուեց Սբ. Էջմիածին, որ նշանակում է Միածին Որդու՝ Յիսուսի իջնելը, էջքը։

47. Ո՞վ եւ ե՞րբ ստեղծեց Հայ այբուբէնը։

Հայ գրերը ստեղծեց Սբ. Մեսրոպ Մաշտոցը 404–406 թուականներին, Սբ. Սահակ հայրապետի օգնութեամբ եւ Վռամշապուհ թագաւորի քաջալերանքով։

48. Ո՞ր գիրքն է առաջին անգամ թարգմանել հայերէն, եւ որն է առաջին հայերէն նախադասութիւնը։

Հայերէն գրուած առաջին գիրքը, Սուրբ Գիրքն է, կամ Աստուածաշունչը։ Լինելով Սուրբ Գրքի գերականց թարգմանութիւն՝ այն հետագայում մասնագէտների կողմից կոչուեց «Թագուհի թարգմանութեանց»։ Սբ. Մեսրոպ Մաշտոցի առաջին հայերէն նախադասութիւնը, հետեւեալն է. «Ճանաչել վիմաստութիւն եւ վխրատ, իմանալ վբանս Հանճարոյ», որն Առակաց Գրքի առաջին գլխի առաջին նախադասութիւնն է։

49. Սբ. Սահակը եւ Սբ. Մեսրոպը ուրիշ ի՞նչ գործեր կատարեցին։

Թարգմանչական աշխատանքին կուգահեռ՝ Սբ. Սահակ եւ Սբ. Մեսրոպ հիմնեցին առաջին դպրոցները հայ պատանիներին սովորեցնելու համար Հայ Գիրն ու Գրականութիւնը։ Այսպիսով հայ ժողովրդի առաջին ուսուցիչները Սբ. Սահակն ու Սբ. Մեսրոպն էին։

50. Ի՞նչ է մշակոյթը։

Մշակոյթը արդիւնքն է մարդկային ստեղծագործ մտքի։ Մշակոյթ ասելով հասկանում ենք՝ գրականութիւն, երաժշտութիւն, ճարտարապետութիւն, գիտութիւն, քանդակագործութիւն, նկարչութիւն, օրէնսդրութիւն, եւ այլ գիտելիքներ։

51. Ո՞վքեր են հայ մշակոյթի գործիչները։

Հայ մշակոյթի գործիչները հիմնականում հայ հոգեւորականներն են։ Օրինակ. Սբ. Մեսրոպն ու Սբ. Սահակը, Շիրակացին եւ Օձնեցին, Նարեկացին ու Շնորհալին, Տաթեւացին, եւ շատ ուրիշներ։

52. Ի՞նչ է Եկեղեցին։

Եկեղեցին Յիսուս Քրիստոսին հաւատացողների հաւաքը կամ ժողովն է։ Քրիստոս աներեւութապէս ներկայ է իր մարմինը խորհրդանշող հաւատացեալների այդ հաւաքին մէջ։ Եկեղեցին երկու տեսակ է լինում՝ հոգեւոր եւ նիւթական։ Հոգեւոր եկեղեցին միեւնոյն հաւատքն ունեցող մարդկանց ամբողջութիւնն է։ Նիւթական եկեղեցին այն շէնքն է, ուր հաւատացեալները Աստուծուն պաշտամունք են մատուցում։

53. Ո՞րն է Հայ Եկեղեցու առաքելութիւնը։

Ամէնից առաջ, իր անդամներին (հայ թէ օտարազգի) ապահով տապանի (նաւի) նման Երկնային Արքայութիւն հասցնել է։ Եկեղեցու առաքելութիւնն է նաեւ՝ իբրեւ մայր դաստիարակ ժողովրդի, կրթել իր զաւակներին քրիստոնէական հաւատքով եւ ուսմունքով ու իրագործել այդ նպատակները ժողովրդի գործնական կեանքում եւ կենցաղում։

ՍՐԲԱԶԱՆ ԴԷՄՔԵՐ

54. Ովքե՞ր են Հայ Եկեղեցու թարգմանիչ վարդապետները։

Հայ Եկեղեցու թարգմանիչ վարդապետներն են՝ Սբ. Սահակ հայրապետը, Սբ. Մեսրոպ Մաշտոցը եւ նրանց աւագ ու կրտսեր աշակերտները՝ Կորիւնը, Եղնիկը, Եղիշէն, Մովսէս Խորենացին, Դաւիթ Անյաղթը, եւ ուրիշներ։

55. Ո՞րն է Հայ Եկեղեցու ազգային դերը։

Հայ Եկեղեցին քրիստոնէական հաւատի եւ իր ազգային դիմագծի շնորհիւ ստեղծեց մասնայատուկ մշակոյթ, որ դարերի ընթացքում պահպանեց մեր ազգի ինքնութիւնը օտար հալածանքներից եւ ճնշումներից։

56. Ինչո՞վ է տարբերւում Հայ Եկեղեցու շէնքը ուրիշ եկեղեցիներից։

Հայ Եկեղեցին իր արտաքին տեսքով ուրիշ եկեղեցիներից հիմնականում տարբերւում է իր վեղարաձեւ գմբէթով եւ խաչանիստ

յատակագծով՝ ճարտարապետական ինքնատիպ հայկական ոճով։

57. Որո՞նք են հայկական նշանաւոր եկեղեցիները։

Հայկական նշանաւոր եկեղեցիներն են՝ Սբ. Էջմիածինը, Սբ. Հռիփսիմէն, Սբ. Գայիանէն, Սբ. Զուարթնոցը, Գեղարդավանքը, Խոր Վիրապը, եւ շատ ուրիշներ արդի Հայաստանում, իսկ Արեւմտեան Հայաստանում՝ Անիի, Աղթամարի, Վարագայ, եւ այլ շատ վանքեր ու եկեղեցիներ։

ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

58. Թուարկենք Հայ Եկեղեցու սպասաւորների հոգեւոր կոչումները, ըստ հերթականութեան։

Դպիր, սարկաւագ, քահանայ, աբեղայ, վարդապետ, ծայրագոյն վարդապետ, եպիսկոպոս, արքեպիսկոպոս, պատրիարք, կաթողիկոս։

59. Ո՞վ է Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Կաթողիկոսը Հայ Եկեղեցու ընդհանուր եւ գերագոյն պետն է։ Նա կոչւում է նաեւ՝ հայրապետ, քահանայապետ եւ եպիսկոպոսապետ։ Մեր օրերում Նորին Սուրբ Օծութիւն Տէր Տէր Գարեգին Երկրորդն է Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

60. Ո՞րն է Հայ Եկեղեցու Ընդհանրական Հայրապետութեան Աթոռը։

Հայ Եկեղեցու Ընդհանրական Հայրապետութեան Աթոռը Սբ. Էջմիածնի կաթողիկոսութիւնն է, հաստատուած՝ 301 թուականին։

61. Ե՞րբ եւ ինչո՞ւ Կիլիկիայում եւս կաթողիկոսութիւն ստեղծուեց։

Պատմական հանգամանքների բերումով 1444 թ. Կիլիկիայում կաթողիկոսութիւն ստեղծուեց, որ տեղի մայրաքաղաքի անունով կոչուեց Սսի Աթոռ։

62. Ե՞րբ տեղափոխուեց Սիսի Աթոռը Կիլիկիայից՝ Լիբանանի Անթիլիաս գիւղաքաղաքը։

Տանն Կիլիկիոյ Սսի Աթոռը, 1915 թուականի տեղահանութեան եւ կոտորածների ժամանակ՝ ժողովրդի հետ տարագրուեց եւ 1928–1930 թթ. հաստատուեց Լիբանանի Անթիլիաս գիւղաքաղաքում։

63. Ո՞վ կարող է եպիսկոպոս օծել եւ միւռոնն օրհնել։

Եպիսկոպոս օծել եւ միւռոնն օրհնել կարող է միայն կաթողիկոսը։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶԳԵՍՏՆԵՐ

64. Թուարկենք եկեղեցում գործածուող Զգեստներից մի քանիսը։

Փակեղ, պարեգոտ, վերարկու, վեղար, փիլոն, շապիկ, գօտի, բաւպան, վակաս, շուրջառ, սաղաւարտ, խոյր, ուրար, թաշկինակ։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍՊԱՍՆԵՐ

65. Թուարկենք եկեղեցում գործածուող սպասներից մի քանիսի անունները։

Խաչ, սկիհ, աղաւնի, կանթեղ, ջահ, գրակալ, խնկաման, աշտանակ, բուրվառ, քշոց, ծնծղայ։

66. Քանի՞ մասից է բաղկացած Հայ Եկեղեցու շէնքը։
Հայ Եկեղեցու շէնքը բաղկացած է չորս մասից՝ բեմ, դաս, սրահ եւ գաւիթ։

67. Հայ Եկեղեցում ի՞նչ գրքեր են գործածւում։
Հայ Եկեղեցում գործածւում են՝ Աւետարան, Ժամագիրք, Մաշտոց, Պատարագամատոյց, Շարակնոց, Տօնացոյց, Տաղարան, Յայսմաւուրք, Ճաշոց։

68. Ի՞նչ է աղօթքը։
Աղօթքը հաւատացեալի խօսակցութիւնն է Աստուծոյ հետ, յայտնի կամ գաղտնի ձեւով՝ այսինքն՝ հրապարակային կամ մեկուսի։

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

69. Ի՞նչ է խորհուրդը։
Խորհուրդը սուրբ արարողակարգ է՝ հիմնուած Քրիստոսի կողմից, որի միջոցով ստանում ենք աստուածային շնորհներ։

70. Որո՞նք են Եկեղեցու խորհուրդները։
Եկեղեցու խորհուրդներն են. Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշխարութիւն, Հաղորդութիւն, Պսակ, Ձեռնադրութիւն եւ Կարգ Հիւանդաց։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԵՐ

71. Որո՞նք են Հայ Եկեղեցու հինգ գլխաւոր (կարեւոր) տօները։
Հայ Եկեղեցու հինգ գլխաւոր տօների անուններն են. Սուրբ Ծնունդ, Սուրբ Զատիկ, Վարդավառ (Այլակերպութիւն), Վերափոխում Սուրբ Աստուածածնի եւ Խաչվերաց։

72. Ի՞նչ է Ծնունդը։

Ծնունդը Յիսուսի ծննդեան եւ մկրտութեան յիշատակի տօնն է։

73. Ի՞նչ է Զատիկը։

Զատիկը Քրիստոսի Յարութեան տօնն է։

74. Ինչպէ՞ս է կոչւում Զատիկին նախորդող շաբաթը։

Զատիկին նախորդող շաբաթը կոչւում է Աւագ Շաբաթ, որ նուիրուած է Քրիստոսի կեանքի վերջին օրերին՝ Մատնութեան, Չարչարանքներին, Խաչելութեան ու Թաղմանը։

75. Ի՞նչ է Վարդավառը։

Վարդավառը Քրիստոսի Այլակերպութեան կամ Պայծառակերպութեան տօնն է։ Այդ օրը աւանդութեան համաձայն միմիեանց վրայ նաեւ ջուր են ցողում։

76. Մեր Եկեղեցին Սբ. Աստուածածնին նուիրուած եօթը տօներ ունի.

ա. «Յղութիւն» Սբ. Աստուածածնի
բ. «Ծնունդ» Սբ. Աստուածածնի
գ. «Ընծայում ի տաճարն» Սբ. Աստուածածնի
դ. «Աւետում» Սբ. Աստուածածնի
ե. «Վերափոխում» Սբ. Աստուածածնի
կ. «Գիւտ Գօտւոյ» Սբ. Աստուածածնի
է. «Գիւտ Տփոյ» Սբ. Աստուածածնի

77. Սբ. Խաչին նուիրուած քանի՞ տօն կայ։

Մեր Եկեղեցում Սբ. Խաչին նուիրուած չորս տօն կայ.
ա. «Գիւտ Խաչի»
բ. «Երեւում Խաչի»
գ. «Վերացում Խաչի»
դ. «Վարագայ Խաչի»

78. Որո՞նք են Հայ Եկեղեցու փօնելի սրբերը։

Հայ Եկեղեցու փօնելի սրբերն են՝ Սանդուխտ կոյս, Ոսկեանք եւ Սուքիասեանք, Հռիփսիմեան կոյսեր, Սբ. Գրիգոր Լուսաւորիչ, Տրդատ թագաւոր, Արիստակէս եւ Վրթանէս, Ներսէս Մեծ, Սահակ, Մեսրոպ եւ նրանց աշակերտները, Վարդանանք, Վահան Գողթնացի, Յովհան Օձնեցի, Գրիգոր Նարեկացի, Ներսէս Շնորհալի, Յովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթեւացի, Մովսէս Տաթեւացի, եւ շատ ուրիշներ։

ՄԵՂՔ ԵՒ ՇՆՈՐՀՔ

79. Ի՞նչ է մեղքը։ Քանի՞ տեսակ մեղք կայ։

Մեղք են այն բոլոր արարքները, որոնք հակառակ են աստուածային պատգամներին ու պատուիրաններին։ Երկու տեսակ մեղք կայ՝ ներելի եւ աններելի։ Աններելի մեղք է Սուրբ Հոգուն հայհոյելը։

80. Որո՞նք են եօթ մոլութիւնները։

Եօթ մոլութիւններն են. հպարտութիւն, նախանձ, բարկութիւն, ծուլութիւն, ագահութիւն, որկրամոլութիւն եւ բղջախոհութիւն (ցանկամոլութիւն)։

81. Որո՞նք են եօթ առաքինութիւնները։

Եօթ առաքինութիւններն են. խոնարհութիւն, մարդասիրութիւն, հեզութիւն, աշխատասիրութիւն, ողորմածութիւն, չափաւորութիւն եւ ողջախոհութիւն։

82. Որո՞նք են Աստուծոյ կարեւոր շնորհները։
Աստուծոյ կարեւոր շնորհներն են՝ Հաւատքը, Յոյսը եւ Սէրը։

83. Ո՞րն է Երկնաւոր Հօր ամենամեծ պարգեւը։
Մեր Երկնաւոր Հօր ամենամեծ պարգեւը Տիրոջ շնորհիւ կատարուած՝ մարդու փրկութիւնն է։

ԾԷՍԵՐ

84. Ի՞նչ է նշանակում «Պատարագ» բառը։
«Պատարագ» նշանակում է կոհ։ Սուրբ Պատարագը Յիսուսի կոհաբերումն է, Նրա կեանքը՝ Մարդեղութիւնից մինչեւ Համբարձում։ Պատարագի իւրաքանչիւր մաս ներկայացնում է Տիրոջ կեանքի մի հատուածը։

85. Քանի՞ մասի է բաժանուած Սբ. Պատարագը։
Սուրբ Պատարագը բաժանուած է չորս գլխաւոր մասերի.
ա. Պատրաստութիւն
բ. Ճաշու բաժին
գ. Կանոն Սուրբ Պատարագի
դ. Օրհնութիւն եւ Արձակում

86. Ի՞նչ են խորհրդանշում Սուրբ Պատարագի չորս մասերը։
- *Պատրաստութիւնը խորհրդանշում է Քրիստոսի Մարդեղութիւնը։*
- *Ճաշու Պատարագը՝ Քրիստոսի գործունէութիւնը։*
- *Սուրբ Պատարագի կանոնը՝ Վերջին Ընթրիքը եւ Աւագ Շաբաթը։*

- *Օրհնութիւն եւ արձակումը՝ Համբարձումը եւ Սուրբ Հոգու գալուստը։*

87. Սբ. Պատարագով Եկեղեցում ի՞նչ է շարունակւում։

Սբ. Պատարագով Եկեղեցում շարունակւում է Քրիստոսի կոհաբերութեան խորհուրդը, որով մարդիկ սրբւում են իրենց մեղքերից եւ միանում Քրիստոսի հետ։

88. Ե՞րբ է Հայկական Պատարագն իր վերջնական տեսքը ստացել։

Հայկական Պատարագն իր վերջնական խմբաւորումը (կազմաւորումը) ստացել է 12-րդ դարում։

89. Ի՞նչ է խորհրդանշում Սուրբ Հաղորդութիւնը։

Սուրբ Հաղորդութիւնը խորհրդանշում է կոհաբերւող Քրիստոսի մարմինն ու արիւնը։ Հաղորդութիւնը հացն ու գինին է, որ հաւատացեալների աղօթքների շնորհիւ մտքի համար անհասանելի ձեւով, դառնում է Քրիստոսի խորհրդաւոր մարմինն ու արիւնը եւ բաշխւում ժողովուրդին։

90. Ինչո՞ւ ենք Սբ. Հաղորդութիւն ստանում։

Սուրբ Հաղորդութիւն ստանում ենք, որպէսզի մաքրւենք մեր մեղքերից եւ միանանք Տիրոջ հետ։ Ցանկալի է առաւել յաճախ Սբ. Հաղորդութիւն ստանալ, բայց ստանալուց առաջ անհրաժեշտ է հոգեպէս եւ ֆիզիքապէս նախապատրաստւել։

91. Ի՞նչ է Հաւատքը։

Կրօնական հաւատքը մի հոգեկան ապրում է եւ հաստատ համոզում՝ մեզ յայտնւած

աստուածային ներշնչումով։ Հաւատով ներքնապէս ընդունում եւ արտաքնապէս խոստովանում ենք Աստուծուն եւ Նրա յայտնած աստուածային ճշմարտութիւնը։

92. Որո՞նք են հաւատքի գլխաւոր բաղկացուցիչ տարրերը (դրոյթները)։

Հաւատքի գլխաւոր բաղկացուցիչ տարրերն են.

ա. Աստուծու կօրութիւնը

բ. Սուրբ Երրորդութիւնը (Հայր Աստուած, Որդի Աստուած, Սուրբ Հոգի Աստուած)

գ. Աստուծու արարչագործութիւնը

դ. Աստուածորդու Մարդեղութիւնը

ե. Աստուածորդու փրկագործութիւնը

կ. Եկեղեցին եւ նրա խորհուրդները

է. Աստուածային շնորհների բաշխումը

ը. Մեռելների յարութիւնը

թ. Վերջին Դատաստանը

ժ. Յաւիտենական կեանքը

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ

93. Աստուած ո՞ւմ միջոցով մարդկութեան յայտնեց հաւատի ճշմարտութիւնները։

Աստուած հաւատի ճշմարտութիւնները մարդկութեանը յայտնեց Իր իսկ միջոցով, երբ մարդ դարձաւ եւ բնակւեց մեր մէջ։

94. Ի՞նչ է նշանակում «Հանգանակ»։

«Հանգանակ» նշանակում է հաւատի դրոյթների ամբողջութիւնը։

95. Նիկիայում 325 թուականի Ա. Տիեզերական ժողովում հաւաքուած 318 հայրապետները ի՞նչ ընդունեցին։

Այդ ժողովում ընդունուեց Նիկիական Հանգանակը կամ Հաւատոյ Հանգանակը։ Այն սկսւում է «Հաւատամք» բառով, ուստի եւ պարզապէս կոչւում է Հաւատամք։ Հաւատամքում հակիրճ ձեւով ամփոփուած են քրիստոնէական հաւատի հիմնական կէտերը։ Ամէն Կիրակի Հաւատամքն ընթերցւում է Սբ. Պատարագի ընթացքում։

96. Արդեօք պարտադի՞ր է իմանալ Հաւատամքը։

Այո՛։ Հայ Եկեղեցու բոլոր կաւակները պարտաւոր են անգիր իմանալ Հաւատամքը, որ կոչւում է նաեւ «Հաւատոյ Հանգանակ»։

97. Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին այլ կերպ ինչպէ՞ս են կոչւում։

Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին կոչւում են նաեւ Ամենասուրբ Երրորդութիւն։

98. Ինչո՞ւ է Հայաստանեայց Եկեղեցին կոչւում Առաքելական։

Հայաստանեայց Եկեղեցին Առաքելական է կոչւում, որովհետեւ.
ա. Այն հիմնել են առաքեալները։
բ. Դարեր շարունակ կառավարւում է առաքեալների յաջորդող եպիսկոպոսներով։
գ. Պահում է առաքեալների փոխանցած ուսմունքը։

99. Ինչի՞ վրայ է հիմնուած Հայ Եկեղեցու Դաւանութիւնը։

Հայ Եկեղեցու Դաւանութիւնը հիմնուած է Սուրբ Գրքի, Առաքեալների եւ Եկեղեցու հայրապետների թողած աւանդութեան, ինչպէս

*նաեւ առաջին երեք Տիեզերական Ժողովնե-
րի որոշումների վրայ։ Հայ Եկեղեցին ընդու-
նում է միայն առաջին երեք Տիեզերական
Ժողովները.*

ա. Նիկիայի (325 թ.)
բ. Կոստանդնուպոլսի (381 թ.)
գ. Եփեսոսի (431 թ.)

100.Ի՞նչ է դաւանում Հայ Եկեղեցին։
*Հայ Եկեղեցին դաւանում է, որ Քրիստոս
կատարեալ Մարդ եւ կատարեալ Աստուած է։*

100 STEPS

OLD TESTAMENT - BEFORE CHRIST

1. **Who created the world?**
   God created the world.

2. **Who was the first man?**
   Adam was the first man and Eve, the first woman.

3. **Why did the Flood take place?**
   The Flood took place because the inhabitants of the world had become disobedient to God's commandments.

4. **Who was saved from the Flood?**
   A good man named Noah, with his family members was saved.

5. **Where did Noah's Ark rest?**
   Noah's Ark rested on Mount Ararat.

6. **Who was Abraham and what country did God give him?**
   Abraham was a wise man, and his wife's name was Sarah. God gave him the country of Canaan.

7. **Who was Moses and what did he do?**
   Moses was a chosen man who obeyed the command of God, led the Israelites out of Egypt, crossing the

Red Sea and settled in Canaan. God gave the Ten Commandments through Moses on Mount Sinai.

8. Which are the Ten Commandments?

The Ten Commandments are:

1. *I am the Lord your God. You shall have no other gods before me.*
2. *You shall not worship any idols.*
3. *You shall not use the Lord's name in vain.*
4. *You shall keep the Sabbath day holy.*
5. *Honor your father and mother.*
6. *You shall not kill.*
7. *You shall not commit adultery.*
8. *You shall not steal.*
9. *You shall not bear false witness against your neighbor.*
10. *You shall not covet your neighbor's wife and possessions.*

NEW TESTAMENT
JESUS, THE SON OF GOD

9. Who was Mary?

Mary was a good and beautiful girl, who was engaged to a kind man, Joseph.

10. What did God's angel promise Mary?

That Mary will give birth to a Son, saying. "Rejoice, Mary, you will have a child and name him Jesus. He will be the Son of God and will save the entire world from sin".

11. **Where was Jesus born?**

Jesus was born in Bethlehem, in a cave where shepherds kept their sheep because there was no room at the inn. Mary wrapped the baby Jesus in a cloth and put him in a manger because there was no crib.

12. **At that time what were the angels singing?**

The angels were singing "Glory to God in the highest, peace on earth, and good will among men".

13. **Why did Jesus come into the world?**

Jesus came into the world to testify to the truth (John 18:37) and to save man from sin by preaching the True Faith, the Faith of the True God, the Faith which is based on love and peace.

14. **What did Jesus do until the time he was baptized?**

Jesus was helping his earthly parents. The Scripture says, "Jesus grew in wisdom and in stature and in favor with God and man". (Luke 2:52)

15. **How old was Jesus when he was baptized and who baptized Jesus?**

Jesus was baptized when he was thirty years old. John the Baptist baptized Jesus, in the River Jordan.

16. **Did Jesus have helpers?**

Yes. The helpers of Jesus were his Disciples. They were later called Apostles. There were twelve of them.

17. **What were their names?**

Peter, Andrew, James, John, Philip, Bartholomew, Thaddeus, Matthew, Thomas, James the son of

Alpheus, Simon, and Judas Iscariot who betrayed him.

18. **Where did Jesus preach?**

    Jesus traveled with his disciples in the towns and villages of Israel and preached in synagogues, homes, at the seashore and on mountains.

19. **How did Jesus show that he was the Son of God?**

    Jesus showed the people that he was the Son of God by his divine teachings and wisdom, by His sermons, by performing many miracles and most importantly, by the Father's witness.

20. **Name a few of the miracles of Jesus.**

    - Jesus walks on the sea (Matt. 14:22-33)
    - Jesus feeds five thousand people (Matt. 14:15- 21, Mark 6:35-44, Luke 9:12-17, John, 6:5-13)
    - Jesus cures the epileptic (Matt. 17:14-17, Mark 9:13-26, Luke 9:37-44)
    - The cursed fig tree (Matt. 21:18-22)
    - Jesus cures two blind men (Matt. 9:27-31)

21. **Name a few of Jesus' parables.**

    -The grain of mustard seed (Matt. 13:31-32)
    -The lost sheep (Luke 15:1-7)
    -The good Samaritan (Luke 11:30-36)
    -The prodigal son (Luke 15:11-31)
    -The barren fig tree (Luke 13:6-9)

22. **What prayer did Jesus teach?**

Jesus taught his disciples the Lord's Prayer.
Our Father who art in Heaven,
Hallowed be thy name.
Thy kingdom come,
Thy will be done
On earth as it is in heaven.
Give us this day your daily bread;
And forgive us our debts,
As we have forgiven our debtors;
And lead us not into temptation.
But deliver us from evil.
For thine is the kingdom,
and the power, and the glory for ever and ever. Amen.

23. **How did the people and the disciples greet Jesus?**

Holding branches of olive trees and palm branches the people and disciples greeted Jesus with shouts of: "Hosanna to the Son of David. Blessed is he who comes in the name of the Lord. Peace in heaven and glory in the highest."

24. **What is Jesus' entry into Jerusalem called?**

Jesus' entry into Jerusalem is called "Palm Sunday."

25. **On the Passover where was Jesus invited and what did he do there?**

Jesus, along with his disciples, was invited to the house of a wealthy man. After dinner he took a towel and water, and as a sign of humility, washed the feet of his disciples.

26. Taking the bread and wine, what did Jesus say and what did he do?

Jesus took the bread, blessed it and broke it and gave it to the disciples saying, "Take, eat; this is my body." And he took a cup and when he had given thanks to the Father he gave it to the disciples saying, "Drink of it, all of you; for this is my blood of the new covenant, which is shed for many for the forgiveness of sins." By doing so Christ established the Sacrament of the Holy Eucharist.

27. What did Jesus establish by doing this?

Jesus established the sacrament of the Holy Communion, which was continued after Jesus by his apostles and their successors - priests.

28. Was Jesus sentenced to death?

Yes. The Romans, and instigated by the religious zealots of the time, took Jesus to Golgotha and nailed his feet and hands to the cross. When Jesus died, some of his followers took him down from the cross, wrapped him in the shroud and put him in the tomb.

29. Why did they crucify Jesus?

They crucified Jesus because he took upon himself the sins of humanity and died for us on the cross. "Behold, the Lamb of God, who takes away the sin of the world!" (John 1:29)

30. What happened three days after Jesus' burial?

Three days after the burial the great miracle of the Resurrection took place. Jesus, with the power of

God, was resurrected from the dead. We call that day Holy Easter. After his Resurrection Jesus appeared to his disciples and to other faithful.

31. **What do we celebrate forty days after Easter?**
Forty days after Easter we celebrate the Feast of the Ascension of Christ. That day Jesus ascended to Heaven and sat at the right side of his Father.

32. **What happened ten days after the Ascension?**
Ten days after the Ascension the Holy Spirit descended upon the Disciples, and they received divine wisdom and grace, and began to speak with each other in different languages. The descent of the Holy Spirit is called Pentecost, which is the day of the establishment of the Christian Church.

MAN AND RELIGION

33. **What is religion?**
Religion is the relationship between man and God.

34. **What did people worship in ancient times?**
In ancient times people worshipped the elements of nature: the sun, fire, water, rivers and lakes, the forest, animals and gods, and made their statues and pictures, called idols.

35. **What does paganism mean?**
Paganism means the worship of idols and false gods; in other words, a false religion.

36. What is Judaism?

Judaism is the religion of the Jews which is based solely on the Old Testament and Jewish traditions.

37. What is Christianity?

Christianity is the religion that Christ proclaimed. According to Christian belief, all people in the world were led astray from God because of the original sin committed by Adam and Eve and the faith in the only begotten Son of God and His true acceptance is the only way that a man can be forgiven by God. Jesus clearly said, "I am the way, the truth and the life. No one comes to the Father except through me." (John 14:6).

38. What does Christianity teach?

Christianity teaches us to worship God. It also teaches us high moral principles, which are written in the Bible. One of those values or commandments is the "Golden Rule": "Whatever you wish that men would do to you, do so to them." (Matthew 7:12)

39. What sections make up the Bible?

The Bible has two sections: The Old Testament and the New Testament.

- The Old Testament tells the story of the Israelites and describes the life and messages of the prophets.

- The New Testament tells the story of the life of Jesus, the principles and morals he proclaimed, and the work and messages of the Apostles.

40. What makes up the New Testament?

The New Testament includes the following: the Gospels of Mathew, Mark, Luke and John; Acts; the letters of the Apostles; and the Book of Revelations. Of the four authors (Evangelists) of the Gospels, Mathew, Mark, Luke and John, only Matthew and John were among the twelve disciples of Jesus.

CHRISTIANITY AND THE ARMENIAN CHURCH

41. Of the twelve apostles of Jesus, which ones preached in Armenia?

Of the twelve apostles of Jesus, Thaddeus and Bartholomew came to Armenia and preached Christianity.

42. Who were the first Armenian Christians?

Among the first Armenian Christians was St. Santukhd, the daughter of the Armenian king.

43. What did the Apostles Sts. Thaddeus and Bartholomew establish?

The Apostles Sts. Thaddeus and Bartholomew became the first illuminators of the Armenians and established the Armenian Church.

44. What is the Armenian Church called?

Because the Armenian Church was established by the Apostles, it is called Armenian Apostolic Church.

45. **When was Christianity declared a state religion in Armenia?**

In 301 A.D., during the reign of King Tiridates, through the efforts of St. Gregory the Illuminator the Armenian people accepted Christianity and declared it as the State religion. The Armenians were the first people to accept Christianity as the official state religion and St. Gregory the Illuminator became the first Pontiff of the Armenians.

46. **What is the first Christian Cathedral built in the world, which still stands today?**

The first Christian Cathedral built in the world was in 303 A.D. and was called Holy Etchmiadzin, which means "the descent of the Only-begotten Son," Jesus.

47. **Who created the Armenian alphabet and when?**

St. Mesrob Mashdots created the Armenian alphabet in the years 404-406, with the support of Catholicos St. Sahag and King Vramshabuh.

48. **Which book was the first one translated into Armenian and what was the first sentence written in Armenian letters?**

The first book translated into Armenian was the Holy Bible. Being a superior translation of the Bible, in later years foreign experts called the Armenian translation "Queen of Translations." The first sentence that St. Mesrob wrote in Armenian letters was the first sentence of the book of Proverbs:

"That men may know wisdom and instruction, understand words of insight."

49. What other work did St. Sahag and St. Mesrob do?

Alongside translating, St. Sahag and St. Mesrob established schools to teach Armenian youth the Armenian alphabet and literature. Thus, the first teachers of the Armenian people were St. Sahag and St. Mesrob.

50. What is culture?

Culture is the product of man's creative mind. By culture we understand religious art, science, literature, music, architecture, sculpture, painting, law, etc.

51. Who were the cultivators of Armenian culture?

The cultivators of Armenian culture were mainly Armenian clergymen, such as Mesrob Mashdots and Sahag Bartev, Anania of Shirag, John of Odzun, Gregory of Narek, Nerses Shnorhali (Graceful), Gregory of Datev and others.

52. What is the church?

The church is the community of people who believe in Jesus Christ. Christ is invisibly present in the church which is also called "the mystical body" of Jesus. The church is of two kinds - spiritual and physical. The spiritual church is the community of faith that shares the same beliefs. The physical church is the building in which the faithful worship God.

53. What is the mission of the church?

First and foremost, like a safe ark to lead its flock (Armenians and non-Armenians alike) to the Heavenly Kingdom. The mission of the church also is to educate its children in the Christian faith and instruction, and to implement those values in the daily life of the people.

NATIONAL SAINTS

54. Who are the Translators of the Armenian Church?

The Translators of the Armenian Church are St. Sahag, St. Mesrob Mashdots, and their students Goryun, Eznig, Elisha, Moses Khoren, David the Invincible, and others.

55. What is the role of the Armenian Church toward the Armenian Church?

It was through the Christian faith and the teachings of the Armenian Church that a culture was created, and it was that culture that throughout the years protected the identity of our nation from foreign enemies, forces and persecutions.

56. How are Armenian Churches structurally different from other churches?

The edifice of Armenian churches is different from others mainly with their domes shaped like a priest's hood, and with their cross-shaped design. These characteristics give them the unique Armenian style.

57. Which are the most famous Armenian churches?

The most famous Armenian churches are: in Modern Armenia - Holy Etchmiadzin, St. Hripsime, St. Gayane, St. Zvartnots, monastery of Geghart, Khor Virab, etc; and in Western Armenia - the monasteries of Ani, Aghtamar, Varak and others.

HIERARCHY

58. Name the different ranks of Armenian clergy, in order.

Acolyte, deacon, priest, monk, celibate priest, dzayrakouyn vartabed, bishop, archbishop, patriarch, catholicos.

59. Who is the Catholicos of All Armenians?

The Catholicos is the supreme leader of the Armenian Church. He is also called Pontiff, or Chief Bishop. His Holiness Karekin II, is the current Supreme Patriarch and Catholicos of All Armenians.

60. What is the universal Pontifical See of the Armenian Church?

The universal Pontifical See of the Armenian Church is the Catholicosate of the Mother See of Holy Etchmiadzin, established in 301 A.D.

61. When and why was the See of Cilicia created?

Due to political situations, in 1444 a catholicosate was created in Cilicia, in the capital city of Sis. And for that reason, it was called the See of Sis.

62. **When did the See of Sis move from Cilicia to Antelias, Lebanon?**

During the exile and genocide of 1915 the See of Cilicia, along with the Armenian people, also moved and in 1928-1930 was established in the city of Antelias, Lebanon.

63. **Who has the authority to consecrate bishops and bless the "Muron"?**

Only the Catholicos has the authority to consecrate bishops, assisted by at least two other bishops, and bless the "Muron."

CHURCH VESTMENTS

64. **Name a few of the vestments used by clergy.**

Head cover, cassock, gown, monastic hood, phelonion, alb, belt, maniple, amice, cape, crown, mitre, stole, towel.

CHURCH SERVICES

65. **Name some vessels used in church services.**

Cross, chalice, dove, lantern, chandelier, book-stand, incense holder, candlestick, censor, banner, fans, cymbals, etc.

66. **What parts make up the edifice of the Armenian Church?**

The edifice of the Armenian Church consists of four parts: altar, chancel, nave, and vestibule.

67. What books are used in the Armenian Church?

Gospel, Book of Hours, Mashdots, Divine Liturgy, Hymnal, Book of Feasts, Book of Variables, Book of Rituals, Lives of Saints, Lectionary.

68. What is prayer?

Prayer is the words of the faithful, directed to God, in either a visible or secret manner, i.e., either in public or private.

SACRAMENTS

69. What is a sacrament?

A sacrament is a holy ritual established by Jesus, through which we acquire divine grace.

70. What are the sacraments of the church?

The sacraments of the church are Holy Baptism, Holy Chrismation, Penance, Holy Communion, Holy Matrimony, Holy Orders, and the Sacrament of Last Rites.

CHURCH FEASTS

71. Which are the five Major Feast days of the Armenian Church?

The five Major Feast days of the Armenian Church are Nativity of Our Lord, The Resurrection of Our Lord, Transfiguration of Our Lord, Assumption of the Holy Mother of God, and Exaltation of the Holy Cross.

72. What is the Feast of the Nativity?

The Feast of the Nativity is the birth and baptism of Jesus.

73. What is Easter?

Easter is the Feast of the Resurrection of Christ.

74. What is the week preceding Easter called?

The week preceding Easter is called Holy Week and is dedicated to the last days of the life of Jesus - the betrayal, suffering, crucifixion and burial.

75. What is Vartavar?

Vartavar is another popular name given to the Feast of the Transfiguration of Jesus.

76. How many feasts are dedicated to Mary?

Our church has seven Feasts dedicated to Mary:

a. Conception of St. Mary
b. Birth of St. Mary
c. Presentation of St. Mary to the Temple
d. Annunciation of St. Mary
e. Assumption of St. Mary
f. Discovery of Her Belt
g. Discovery of Her Jewel Box

77. How many feasts are dedicated to the Holy Cross?

Our church has four Feasts dedicated to the Holy Cross:

a. Discovery of the Holy Cross
b. Apparition of the Holy Cross
c. Exaltation of the Holy Cross
d. Holy Cross of St. Varak

78. Who are some of the saints of the Armenian Church?

Some of the saints of the Armenian church who are celebrated in feast days are: St. Santukhd the Virgin, St. Voski and his companions, St. Soukias and his companions, St. Hripsime and her companions, St. Gregory the Illuminator, St. Tiridates the King, Sts. Aristhakes and Vrthanes, Nersess the Great, Sts. Sahag and Mesrob and the Translators, St. Vartan and his companions, St. Vahan of Goghtn, St. John of Odzun, St. Gregory of Narek, St. Nersess the Graceful, St. John of Vorodn, Sts. Gregory of Datev, Moses of Datev and many others.

SIN AND GRACE

79. What is sin? What are the different types of sin?

Sin is any act that opposes the messages and commandments of God. There are two types of sin, those that can be forgiven and those that can't. Cursing against the Holy Spirit is a sin that cannot be forgiven.

80. What are the seven deadly sins?

The seven deadly sins are: pride, envy, anger, laziness, greed, gluttony, and lust.

81. What are the seven virtues?

The seven virtues are: humility, philanthropy, meekness, diligence, mercy, moderation, and sound judgment.

82. What are the fundamental graces of God?

The fundamental graces of God are faith, hope and love.

83. What is the greatest gift of our Heavenly Father?

The greatest gift of our Heavenly Father is man's salvation through Christ our Lord.

RITES

84. What does "Badarak" mean?

"Badarak" means sacrifice. "Badarak" the Divine Liturgy is the sacrifice of the life of Jesus Christ; it represents His life, from His birth as Man till the Ascension.

85. How many sections make up the Divine Liturgy?

The Divine Liturgy consists of four main sections:

a. The Preparation

b. The Synaxis

c. The Eucharist

d. The Dismissal

86. What do the four sections of Divine Liturgy represent?

- The Preparation represents the birth of Jesus as Man.

- The Synaxis represents the work of Jesus.

- The Eucharist represents the Last Supper and Holy Saturday.

- The Dismissal represents the advent of the Holy Spirit.

87. What message of the Church is preserved by the Divine Liturgy?

The Divine Liturgy preserves the message of Christ's sacrifice, through which man is freed from sin and united with Christ.

88. When did the Armenian Liturgy receive its final form?

The Armenian Liturgy received its final form in 12th century A.D.

89. What does Holy Communion represent?

Holy Communion represents the sacrificial Body and Blood of Christ. Communion is the bread and wine that the faithful receive from the hand of the Priest, as a true portion of the body and blood of Jesus. It is worth mentioning that we believe in the real presence of Christ in the Holy Communion and do not think of it as a mere symbol.

90. Why do we receive Holy Communion?

We receive Holy Communion to be absolved from sin and be united with Christ our Lord. According to our Church fathers, faithful should receive the Holy Communion as frequently as possible, yet they should prepare themselves spiritually and bodily before receiving it.

91. What is faith?

Faith is a spiritual gift and a firm belief, through divine inspiration. With faith we internally accept and externally confess God and His truth.

92. What are the main elements of faith?

The main elements of faith are:

a. The existence of God
b. The Holy Trinity (the Father, Son and Holy Spirit)
c. The creative work of God
d. The birth of the Son of God as Man
e. Salvation through the Son of God
f. The Church and its sacraments
g. The distribution of God's graces
h. The resurrection of the dead
i. The Last Judgment
j. Everlasting life

DOCTRINE

93. How God revealed to us the truth of faith?

God revealed to humanity the truth of faith by Himself when He became man and dwelled among us (John 1: 14), and sacrificed himself for us.

94. What does "Creed" mean?

"Creed" means the collection of the elements of faith.

95. What did the 318 bishops accept at the Council of Nicea in 325 A.D.?

The Nicene Creed was accepted at the Council of Nicea in 325 A.D. It begins with the words "Havadamk" or "We believe", and thus in Armenian it is simply called "Havadamk". It contains the main points of the Christian faith. It is recited every Sunday during Divine Liturgy.

96. Is it mandatory to know the Creed?

Yes, all children of our Church should know the Creed, also known as "Symbol of Faith".

97. What other name is given to the Father, the Son and the Holy Spirit?

The Father, the Son and the Holy Spirit are also called the Holy Trinity.

98. Why is the Armenian Church called Apostolic?

The Armenian Church is called Apostolic because:

a. *It was established by the Apostles.*
b. *It has been governed for centuries by bishops who have succeeded them.*
c. *It maintains the faith conveyed by the Apostles.*

99. What is the basis for the affirmation of the Armenian Church?

The affirmation of the Armenian Church is based on the Holy Bible, the traditions of the

Apostles and the fathers of the church, as well as the three Ecumenical Councils:

a. *Nicea (325 A.D.)*
b. *Constantinople (381 A.D.)*
c. *Ephesus (431 A.D.)*

100. What is the affirmation of the Armenian Church?

That Jesus Christ is TRUE GOD and TRUE MAN.